Ճանապարհ դեպի Եվրամիություն՝ առավելություններ և առաջընթացի հնարավորություն

2025

Ճանապարհ դեպի Եվրամիություն՝: առավելություններ և առաջընթացի հնարավորություն

Հրապարակման մեջ տեղ են գտել ԵՄ ինստիտուտների կայքերում հրապարակված տեղեկությունները, Եվրոստատի տվյալները, հանրային, բաց և հավաստի պաշտոնական աղբյուրները:

Հրապարակումը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի կառավարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) աջակցությամբ: Բովանդակությունը հեղինակային է և հնարավոր է չարտահայտի Մեծ Բրիտանիայի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի տեսակետները:

Գրքույկի հեղինակ և նախագծի փորձագետ՝ ***Էկատերինե Քարդավա,*** *իրավագիտության դոկտոր, Ժան Մոնեի պրոֆեսոր և Գորիի պետական համալսարանի Էրազմուս+ Ժան Մոնեի ամբիոնի վարիչ, «Եվրոպայի ժամանակով» ասոցիացիայի նախագահ, ԵՄ գիտական գործողությունների նախագծերի (EU COST Actions) գնահատող, EU CA22124 նախագծի ղեկավար կոմիտեի անդամ Վրաստանից, խորհրդական աշխատանքի իրավունքի և մենեջմենտի ոլորտում: Հեղինակ է ավելի քան 30 գիտական աշխատությունների (գրքեր, հոդվածներ, ձեռնարկներ, հետազոտություններ):*

Նախագծի համակարգող՝ ***Գիորգի Կակուբավա***

Նախագծի հեղինակ և իրականացնող՝ Մարդու իրավունքների պաշտպանների միություն - Մարդու իրավունքների կենտրոն

© Մարդու իրավունքների պաշտպանների միություն - Մարդու իրավունքների կենտրոն
© Հեղինակ՝ Էկատերինե Քարդավա
© ՄԱԿ-ի զարգացման ծրագիր – UNDP

Թբիլիսի, 2025 թ.

Բովանդակություն

1.Եվրամիության հիմնական ձեռքբերումները 3

Ի՞նչ է Եվրամիությունը 3
Խաղաղություն.....3
Ներքին շուկա 4
Ներքին շուկա 4
Ինչպիսի՞ն են ազատության ընդհանուր տարածքը և մարդու իրավունքները Եվրամիությունում.....5
Կրթություն 7
Մշակույթ 7
Սննդամթերքի անվտանգություն և որակ.....8
Միջազգային դիվանագիտություն, անվտանգություն և հումանիտար օգնություն.....8
Եվրամիության բյուջե.....9
Տրանսպորտի քաղաքականություն.....10
Ինչպիսի՞ն են գյուղատնտեսությունը և տարածաշրջանային քաղաքականությունը Եվրամիությունում 10
Ինչպիսի՞ն է քաղաքացիների բավարարվածության ինդեքսը Եվրամիությունում.....11

2.Եվրամիությանն անդամակցելու բարիքները ետխորհրդային երկրների համար 14

Խորվաթիայի օրինակը 18

3.Ինչպիսի՞ն է Եվրամիության բանկային և վարկային քաղաքականությունը.....19

4.Ի՞նչ է նշանակում Վրաստանի համար թեկնածուի կարգավիճակը.....21

1 Եվրամիության հիմնական ձեռքբերումները

Ի՞նչ է Եվրամիությունը

Եվրամիությունը բացառիկ արժեք ներկայացնող քաղաքական և տնտեսական միություն է, **որի նպատակն է ապահովել խաղաղություն, բարեկեցություն և ազատություն առավել արդար և անվտանգ աշխարհում:** Եվրամիությունը հիմնված է հետևյալ արժեքների վրա՝ արժանապատվություն, ազատություն, հավասարություն, օրենքի գերակայություն, ինչպես նաև հարգանք մարդու իրավունքների նկատմամբ: Այս արժեքները միավորում են Եվրամիության անդամ 27 երկրներին, որոնց բնորոշ է բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարությունը, համերաշխությունը և հավասարությունը իր 446 միլիոն քաղաքացիների նկատմամբ: Ահա այս է այն գաղափարը, որը միավորում է Եվրամիության կազմում ընդգրկված 27 պետությունների քաղաքացիներին:

Խաղաղություն

Եվրամիությունն (ԵՄ) ապահովել է 73 տարվա անխափան խաղաղություն, կայունություն և բարեկեցություն (1951 թվականից մինչ օրս): 2012 թվականին Եվրամիությունն արժանացել է Խաղաղության Նոբելյան մրցանակի: Եվրամիության անդամ երկրների միավորման հիմնարար արժեքը եղել և մնում են խաղաղության պահպանումը և միմյանց շահերից բխող գործողությունները: Այս միասնության մեջ համընկնում են **ազգային** և **ընդհանուր եվրոպական** նպատակները, ինչը հանգեցրել է ազատ ներքին շուկայի, արդարադատության և բարեկեցության համընդհանուր տարածքի գործունեությանն ու կայունությանը, տարբեր ազգերի խաղաղ համագոյակցությանն ու համերաշխ կյանքին:

Ներքին շուկա

Խաղաղությունն ապահովվում է անդամ երկրների գիտակցված որոշմամբ՝ Եվրամիությանն անդամակցելով ներգրավվել փոխշահավետ գործողություններում, ընդհանուր եվրոպական անվտանգության և բարեկեցության բարձրացման գործընթացում: Յուրաքանչյուր ոք գիտակցում է, որ խաղաղության ապահովման համար ազգային ինքնիշխանության հետ մեկտեղ անհրաժեշտ է կառուցել ընդհանուր եվրոպական ինքնիշխանություն: Անցյալի պատերազմների և հակամարտությունների պատմական հիշողությունը դրդում է նրանց դեպի միասնականություն և փոխպաշտպանություն: **Անդամ երկրների նման ողջամիտ ընտրությունը պաշտպանված է Եվրամիության ինստիտուտների որոշումներում:** Եվրամիությունն ընդունում է օրենքներ և կայացնում որոշումներ՝ հարգելով համամասնականության և սուբսիդիարության սկզբունքները, ինչը նշանակում է ԵՄ քաղաքականության մեջ հաշվի առնել բոլոր 27 պետությունների և ժողովուրդների ընդհանուր շահերը:

Ճանապարհ դեպի Եվրամիություն՝: առավելություններ և առաջընթացի հնարավորություն

Ճանապարհ դեպի Եվրամիություն՝: առավելություններ և առաջընթացի հնարավորություն

Ներքին շուկա

Ներքին շուկան Եվրամիության հիմնական տնտեսական շարժիչն է և ամենամեծ ներդրումը: Սա թույլ է տալիս մարդկանց ազատ տեղաշարժվել Եվրոպական միության սահմաններում (եվրոպական մայրցամաքի մեծ մասում): Մարդկանց հետ մեկտեղ կա նաև **ապրանքի, ծառայության, կապիտալի ազատ տեղաշարժի** եզակի հնարավորություն:

Եվրոն (որն օգտագործվում է Եվրամիության ավելի քան 340 միլիոն քաղաքացիների կողմից) վերացրել է արժույթի տատանումների և փոխանակման ծախսերի ռիսկը, ամրապնդել ներքին շուկան՝ հօգուտ Եվրամիության երկրների, բիզնեսների և քաղաքացիների:

Եվրամիության ներքին շուկայում՝ 27 երկրի մասշտաբով, ապրանքի տեղաշարժն իրականացվում է ունիֆիկացված (միասնականացված) **միասնական մաքսային կարգավորման** շրջանակներում: Այս

կարգավորումը գրավել է ողջ աշխարհի ուշադրությունը և առևտրային ճանապարհներ բացել դեպի Եվրամիություն: **Եվրամիության ներքին շուկան դարձել է կենտրոնական վայր,** որտեղ փոխանակման հարաբերություններ են հաստատում գրեթե բոլոր պետություններն ու հաջողակ բիզնեսները:

Եվրամիությունն առաջին տեղում է, երբ խոսքը վերաբերում է գլոբալ առևտրին: **Առևտրային ռեժիմի բաց լինելը նշանակում է, որ Եվրամիությունն ամենամեծ խաղացողն է համաշխարհային առևտրի հարթակում:** Եվրամիությունն արտադրված ապրանքների և ծառայությունների աշխարհի խոշորագույն արտահանողն է և, միևնույն ժամանակ, հենց ինքն է արտահանման ամենամեծ շուկան **շուրջ 80 երկրների համար**:

Ներքին շուկայում Եվրամիությունը պահպանում է հավասարության և մրցակցության քաղաքականություն: Ո՛չ պետությունը, ո՛չ բիզնեսն իրավունք չունեն սահմանափակել բիզնեսի ազատությունը՝ անձնական շահի նպատակով: **Եվրամիությունում կա 446 միլիոն սպառող**, որոնց համար ԵՄ ներքին շուկայում արդար և ոչ խտրական մրցակցության կանոնների շնորհիվ հասանելի են բոլոր ապրանքներն ու ծառայությունները: **Սպառողը զոհ է մատչելի գներից, ապահովված է անվնաս սննդամթերքով և անվտանգ ապրանքով:**

Ինչպիսի՞ն են ազատության ընդհանուր տարածքը և մարդու իրավունքները Եվրամիությունում

Եվրամիության յուրաքանչյուր քաղաքացի ունի սովորելու, աշխատելու կամ թոշակի անցնելու իրավունք ԵՄ ցանկացած երկրում: Զբաղվածության, սոցիալական ապահովության և հարկային նպատակներով Եվրամիության բոլոր երկրները պարտավոր են ԵՄ անդամ մյուս երկրների քաղաքացիներին վերաբերվել այնպես, ինչպես իրենց երկրի քաղաքացիներին:

Եվրամիության մակարդակով հատուկ ուշադրություն է դարձվում աշխատողների իրավունքների պաշտպանությանը: ԵՄ ցանկացած երկրում գործում են Եվրամիության կողմից սահմանված աշխատողների պաշտպանության նվազագույն չափորոշիչներ (*աշխատանքային շաբաթվա առավելագույն տևողությունը, արձակուրդի տևողությունը, մոր հղիության և ծննդաբերության արձակուրդի վճարման սխեման, փորձաշրջանի ստանդարտը, երեխայի խնամքի (ծնողական) և հայրության արձակուրդների տևողությունը, նվազագույն աշխատավարձի սխեման և այլն):* Անշուշտ, յուրաքանչյուր երկիր իրավունք ունի սահմանել Եվրամիության սահմանածից ավելի բարձր չափորոշիչ, **սակայն որևէ մեկը չունի այդ չափորոշիչն իջեցնելու իրավունք:** Սա Եվրոպական Միությունում ընդհանուր բարեկեցության տարածք է ստեղծում:

Եվրամիությունում գտնում են, որ չվարձատրվող ստաժավորումը երիտասարդների նկատմամբ անարդար գործողություն է և ժամանակակից ստրկություն:

ԵՄ հիմնարար իրավունքների խարտիան սահմանել է *մասնագիտական և ընտանեկան կյանքի հավասարակշռության և փոխհամատեղելիության* նոր իրավունք:

Եվրամիությունում օրենսդրական մակարդակով (2003/86 դիրեկտիվով) **պաշտպանված է ընտանիքի միասնության սկզբունքը**: **Եթե ամուսիններից մեկն աշխատում է Եվրամիությունում, ապա նրա հետ կարող են գտնվել նաև ընտանիքի մնացած անդամները:** Եվրամիությունում գտնում են, որ ընտանիքի անդամների միավորումը ընտանեկան կյանքի պահպանման անհրաժեշտ ուղին է, ինչը նպաստում է սոցիոմշակութային կայունության ստեղծմանը, ծառայում է տնտեսական և սոցիալական միասնությանը և հասարակության հիմնարար նպատակին:

Եվրամիությունը նոր ծննդաբերած մայրերի համար սահմանել է հղիության և ծննդաբերության (դեկրետային) արձակուրդի պարտադիր ժամկետ և դրա համապատասխան վարձատրության սխեմա, **որպեսզի մայրերը ստիպված չլինեն թողնել իրենց երեխաներին և ժամանակից շուտ դադարեցնել կրծքով կերակրումը[1]:**

[1] *Է.Քարդավա՝* Վրաստանի աշխատանքային օրենսդրության համապատասխանությունը ԵՄ աշխատանքային իրավունքին. որոշումներ և դժվարություններ հղիության և ծննդաբերության արձակուրդի հատվածում, Jean Monnet Excellence, CSG, 2024, էջ. 23-25, https://cu.edu.ge/files/Docs/2024/grant%20project/europlants/Publikacia_P2%20(1).pdf

Եվրամիությունում աճել է կյանքի տևողությունը: 15 երկրներում կյանքի տևողությունը գերազանցել է Եվրամիության միջին ցուցանիշը: Կյանքի ամենաբարձր տևողությունը գրանցվել է Իսպանիայում (84 տարի), Իտալիայում (83,8 տարի) և Մալթայում (83,6 տարի), իսկ կանքի ամենացածր տևողությունը՝ Բուլղարիայում (75,8 տարի), Լատվիայում (75,9 տարի) և Ռումինիայում (76,6 տարի):

Կրթություն

Կրթության քաղաքականությունը ԵՄ անդամ յուրաքանչյուր երկրի արտոնությունն է: Եվրամիությունն այս ոլորտում գործում է որպես աջակից և զարգացնող:

Գիտական, ուսումնական և փոխանակման ծրագրերի շրջանակներում (Erasmus+, EU Cost Actions, Horizon Europe, European Solidarity Corps և այլն) Եվրամիությունը ֆինանսավորում է ոչ միայն անդամ, այլ նաև գործընկեր և հարևան երկրների համալսարանները, հետազոտական հաստատությունները և այլ կրթական հաստատություններ:

Մշակույթ

Մշակույթի ոլորտը Եվրամիության անդամ երկրների ազգային իրավասության ոլորտն է: Մշակույթի ոլորտում Եվրամիությունը օրենքներ ընդունելու իրավունք չունի: Հակառակը, Եվրամիությունը պարտավոր է աջակցել անդամ երկրներին իրենց կարիքները բավարարելու և աջակցության ծրագրերը ֆինանսավորելու հարցում: Այսպիսով, Եվրամիության իրավասությունն է.

- *պահպանել մշակութային ժառանգությունը ոչ միայն Եվրամիության, այլև ողջ աշխարհի մասշտաբով,*
- *աջակցել մշակութային և ստեղծագործական ոլորտին,*
- *պահպանել եվրոպական ժառանգությունն ու դրա պիտակները [2],*

[2] Եվրոպական ժառանգության հուշարձաններն այսօրվա Եվրոպայի ստեղծման փուլերն են: Այս հուշարձանները և դրանց վայրերը խորհրդանշում են եվրոպական իդեալները, արժեքները, պատմությունը և ինտեգրումը: 2013 թվականից սկսվել է նման վայրերի և հուշարձանների ընտրությունը և դրանց վրա Եվրոպական ժառանգության պիտակի նշումը: Թվարկացանկը տե՛ս այստեղ՝ https://culture.ec.europa.eu/cultural-heritage/initiatives-and-success-stories/european-heritage-label

- *զարգացնել թվային մշակույթը [3],*
- *խթանել սպորտը:*

Սննդամթերքի անվտանգություն և որակ

Սննդամթերքի անվտանգությունը Եվրամիությունում բաժանվում է 4 ուղղությունների՝ առողջ բույսեր, առողջ կենդանիներ, սննդամթերքի հիգիենա, աղտոտիչներ և թափոններ: Այս ամենը ստեղծում է մարդու առողջության և երկարակեցության միջավայր:

Ելնելով նրանից, որ Եվրամիության երկրները սերտորեն համագործակցում են անվտանգության ընդհանուր կանոններ հաստատելու գործում, ԵՄ-ում արտադրվող սննդամթերքը և շրջակա միջավայրը համապատասխանում են աշխարհի ամենաբարձր որակի չափորոշիչներին: 2006 թվականից Եվրամիությունում չեն օգտագործվում հակաբիոտիկների օգնությամբ աճի խթանիչներ, Եվրամիության որակի սխեմայով գրանցված է 3500 ապրանք, թունաքիմիկատների (PPPs) օգտագործման հարցը կարգավորվում է ԵՄ հատուկ օրենքներով, մշտադիտարկվում է ջրի, օդի որակը և այլն:

Միջազգային դիվանագիտություն, անվտանգություն և հումանիտար օգնություն

Եվրամիությունը և նրա անդամ երկրները միասին համարվում են զարգացման խոշորագույն դոնորն աշխարհում: Եվրամիության ինստիտուտները և ազգային կառավարությունները համատեղ աշխատում են լավ կառավարումը խթանելու, սովի դեմ պայքարելու և բնական ռեսուրսները պահպանելու համար: Եվրամիությունն օգնություն է տրամադրում երկրներին և բնակչությանը ինչպես Եվրոպայի ներսում, այնպես էլ

[3] Եվրահանձնաժողովը խթանում է մեդիա-քաղաքականության հետևողական մոտեցումը, որը ներառում է օրենսդրություն՝ մեդիածառայությունների և եվրոպական մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ: Եվրահանձնաժողովն աշխատում է օրենսդրության վրա, որն աջակցում է ԵՄ-ում բովանդակություն տարածելու հնարավորությանը: Այն ապահովում է հեղինակային իրավունքների տեսանկյունից ճիշտ կարգավորող շրջանակի առկայությունը, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի կարողանա լիովին օգտվել իսկապես կապված թվային Եվրոպայի կողմից առաջարկվող մեծ հնարավորություններից: Եվրոպական մշակութային ժառանգության հավաքածուների թվայնացումը Եվրոպայի գրադարաններում, արխիվներում, թանգարաններում և տեսալսողական արխիվներում այն հասանելի է դարձնում բոլորի համար:

նրա սահմաններից դուրս: Խոշոր աղետների կամ հումանիտար արտակարգ իրավիճակների ժամանակ Եվրամիությունն աջակցության առաջատար դերակատարն է աշխարհում: **Ամեն տարի Եվրամիությունը սնունդ, կացարան, առողջապահական միջոցներ և մաքուր ջուր է տրամադրում ավելի քան 80 երկրներում աղետների և հակամարտությունների 120 միլիոնից ավելի զոհերի:**

Եվրամիության բյուջե

Եվրամիությունը ֆինանսավորում է խոշոր ենթակառուցվածքային և հետազոտական ծրագրեր, **օգնում է անդամ երկրներում և դրանցից դուրս աշխարհի մարտահրավերներին արձագանքելու հարցում:** Եվրամիության բյուջեն լրացնում է ԵՄ անդամ երկրների ազգային բյուջեները: **Եվրամիության բյուջեն հիմնված է համերաշխության սկզբունքի վրա,** և հետևաբար, ԵՄ-ն կարող է աջակցել ոչ այնքան հարուստ անդամ երկրներին տնտեսական զարգացման գործում: Համերաշխություն նշանակում է նաև աջակցել հարևաններին/երրորդ երկրներին և օգնել բարելավել նրանց քաղաքացիների կյանքը:

Եվրամիության 2021-2027 թվականների բյուջեն կազմում է մոտավորապես 2 տրիլիոն եվրո: Այն հիմնականում բաժանվում է ծախսերի 7 բնագավառի՝

- ներքին շուկա և նորարարություններ,
- միասնություն, կայունություն և արժեքներ,
- բնական ռեսուրսներ և շրջակա միջավայր,
- միգրացիա և սահմանների կառավարում,
- անվտանգություն և պաշտպանություն,
- հարևանություն և աշխարհ,
- Եվրոպական հանրային կառավարում:

Եվրամիության բյուջեի մեծ մասը (մոտ 50%-ը) տրամադրվում է գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին, ձկնորսությանը, գյուղի զարգացմանն ու տարածաշրջանային զարգացմանը:

Տրանսպորտի քաղաքականություն

Տրանսպորտը էկոնոմիկայում գլխավոր ներդրողն է: Տրանսպորտի բնագավառում աշխատում է ավելի քան 11 միլիոն մարդ:

Տրանսպորտը եվրոպական ինտեգրման անկյունաքարն է և կենսապես կարևոր է մարդկանց, ծառայությունների և ապրանքի ազատ տեղաշարժի համար:

Տրանսպորտային քաղաքականությունը կենտրոնացած է կանաչ, ճկուն և արագ ռազմավարությունների վրա: Երկաթուղային հատվածի ռազմավարությունը մինչև 2030 թվականը նախատեսում է կրկնապատկել արագընթաց **երկաթուղային** տեղաշարժը Եվրամիությունում:

Ինչպիսի՞ն են գյուղատնտեսությունը և տարածաշրջանային քաղաքականությունը Եվրամիությունում

Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականությունը (CAP) ներառում է **սննդի արդյունաբերության, շրջակա միջավայրի պահպանության և գյուղի զարգացման հարցերը:** Եվրամիության նպատակներն են՝ խթանել գյուղատնտեսության և անտառային տնտեսության մրցունակությունը, ապահովել բնական ռեսուրսների և կլիմայական գործողությունների կայուն կառավարումը, հասնել գյուղական էկոնոմիկայի և համայնքների բալանսավորված տարածքային զարգացմանը **(ներառյալ՝ աշխատատեղերի ստեղծումն ու պահպանումը):**

«Խելացի գյուղ» (Smart Village) հայեցակարգը, որն ի սկզբանե գործարկվել է 2017 թվականին, Եվրոպական միության կարևոր տարածքային գործիքն է գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական հզորացման և գյուղատնտեսության արդիականացման համար:

Ինչպիսի՞ն է քաղաքացիների բավարարվածության ինդեքսը Եվրամիությունում

Ամեն տարի աշխարհի մասշտաբով անցկացվում է մարդկանց բավարարվածության և երջանկության հետազոտություն: Նման հետազոտությունը հիմնված է 6 հիմնական չափանիշների վրա՝

1. *եկամուտ,*
2. *առողջ կյանքի տևողություն,*
3. *դժվարության պահին հենարանի, օգնականի առկայություն,*
4. *բարության միջավայր,*
5. *ազատություն,*
6. *վստահություն (չափվում է կառավարությունում և բիզնեսում կոռուպցիայի բացակայությամբ):*

Համաձայն 2024 տարվա տվյալների.

143 երկրների շարքում կյանքի էվոլյուցիայի/զարգացման ինդեքսում առաջատար դիրքերը հիմնականում զբաղեցնում են ԵՄ անդամ երկրները, այդ թվում՝ նախկին խորհրդային երկրները, որոնք այժմ ԵՄ անդամ են:



Ըստ բավարարվածության և երջանկության ինդեքսի143 երկրների կազմում Վրաստանը զբաղեցնում է 91-րդ տեղը:

Տարեց բնակչության շրջանում երջանկության ինդեքսը 143 երկրների մասշտաբով հետևյալն է՝



Ըստ տարեց բնակչության երջանկության ինդեքսի 143 երկրների կազմում Վրաստանը զբաղեցնում է 91-րդ տեղը:

2006-2010-ից 2021-2023 թվականներին 134 երկրների շարքում երջանկության ինդեքսի աճի տվյալները հետևյալն են.

Կանաչ գույնով նշված են ԵՄ նոր անդամ երկրները (նախկին խորհրդային երկրները), կապույտ գույնով՝ հետագա ընդլայնման 10 երկրները: (Ընդլայնման երկրներում ընթացող եվրոպական բարեփոխումների ֆոնին (մոտ 17 տարվա զարգացման ճանապարհ) աճում էր նաև երջանկության ինդեքսը):

134 երկրների շարքում երջանկության ինդեքսի աճի տվյալները հետևյալն են



2 Եվրամիությանն անդամակցելու բարիքները ետխորհրդային երկրների համար

Քսան տարի առաջ՝ 2004 թվականի մայիսի 1-ին, Կենտրոնական Եվրոպայի ութ երկրներ (CEE[4]) միացան Եվրամիությանը (Չեխիա, Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Սլովակիա և Սլովենիա): Համաձայն Լեհաստանի էկոնոմիկայի ինստիտուտի վերլուծության՝ տարածաշրջանի ութ երկրի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 27 տոկոսով ավելի է, քան այն կլիներ ԵՄ-ին չանդամակցելու դեպքում:

CEE երկրների անդամակցության 20 տարին վկայում է, որ ամենամեծ օգուտն առաջին հերթին ստացվել է ներքին շուկայից՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը (աճ՝ 21 անգամ) և ինտեգրումը համաշխարհային մատակարարման շղթաներին: Օրինակ, ICT (ՏՀՏ՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ) ծառայություններում արտադրված ավելացված արժեքը կրկնապատկվել է 2008-2021 թվականներին:

Տնտեսական օգուտից բացի Եվրամիության ընդլայնումը նոր անդամներին բերել է նաև **սոցիալական հաջողություններ:** Տարածաշրջանի բոլոր ութ երկրներում զգալիորեն աճել են կյանքի որակի ցուցանիշները: Սա ներառում է կյանքի տևողությունը և մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակը: Օրինակ, **Սլովենիան ներկայումս ունի Մարդկային զարգացման ամենաբարձր ինդեքսը տարածաշրջանում** (23-րդն աշխարհում):

Բարելավվել է նաև գյուղական բնակավայրերի կենսամակարդակը: Բացի այդ, ութ անդամ երկրներից հինգում աղքատության վտանգի ներքո գտնվող մարդկանց մասնաբաժինը նվազել է ԵՄ միջին ցուցանիշից, ամենուր կրճատվել է կոռուպցիան (բացառությամբ Հունգարիայի և Սլովենիայի): Փոխվել են շրջակա միջավայրի պահպանության չափորոշիչները, էներգիայի արտադրության կառուցվածքը և տարածաշրջանի էկոնոմիկայի ածխածնի ինտենսիվությունը: **Անդամակցությունն արագացրել է վերականգնվող էներգիայի զարգացումը բոլոր ութ երկրներում:** Էներգետիկայի, տրանսպորտի և ջեռուցման ոլորտների փոխակերպումը բարելավել է օդի

[4] CEE-ն Կենտրոնական և Արևելյան Եվրոպան է. առաջին 8 ետխորհրդային երկրները, որոնք միացել են Եվրամիությանը՝ Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Չեխիան, Սլովակիան, Սլովենիան, Լեհաստանը, Հունգարիան: CEE-ն ներառում է հետագա ընդլայնման երկու երկիր՝ Ռումինիան և Բուլղարիան: CEE-ն ներառում է վերջին ընդլայնված երկիրը՝ Խորվաթիան:

որակը: **2005-2021 թվականներին ԵՄ-ում օդի աղտոտվածության հետ կապված վաղաժամ մահերի թիվը նվազել է 75%-ով:**

Ստորև ներկայացված են ԵՄ 11 նոր անդամ երկրների տվյալները: Այս տվյալների համաժամացումը և համեմատումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին:

Երկիր- Պարտադիր նվազագույն աշխատավարձ, եվրո
Կենսաթոշակի չափը, եվրո)



Երկիր - Գործազրկություն



Երկիր	Գործազրկություն
Լեհաստան	2.8%
Չեխիա	2.6%
Սլովենիա	3.7%
Ռումինիա	5.6%
Էստոնիա	6.4%
Հունգարիա	4.1%
Լիտվա	6.9%
Խորվաթիա	6.1%
Լատվիա	6.5%
Սլովակիա	5.8%
Բուլղարիա	4.3%

Երկիր – Մեկ շնչին ընկնող ՀՆԱ, եվրո



Տվյալները վկայում են, որ աշխատավարձի պարտադիր նվազագույնի և կենսաթոշակի չափի միջև տարբերությունը փոքր է:

Եվրամիության նպատակն է ԵՄ քաղաքացիների համար ապահովել սպառողական մատչելի գներ: Անշուշտ, սպառողական գների և նվազագույն եկամտի/աշխատավարձի ինդեքսը հավասարակշռված է: Օրինակ՝ **մեկ լիտր կաթի արժեքը կազմում է**



Խորվաթիայի օրինակը

Խորվաթիան յոթերորդ ընդլայնման վերջին երկիրն է, որը միացավ Եվրամիությանը 2013 թվականին:

- Անդամակցության հայտը Խորվաթիան ներկայացրեց 2003 թվականի փետրվարի 21-ին:
- Եվրահանձնաժողովը դրական գնահատեց հայտը 2004 թվականի ապրիլին (հայտի ներկայացումից մեկ տարի և երկու ամիս անց)[5]:
- Անդամակցության բանակցություններն ի վերջո սկսվեցին 2005 թվականի հոկտեմբերի 3-ին՝ Հաագայի գլխավոր դատախազի կողմից Միջազգային քրեական տրիբունալի հետ Խորվաթիայի լիարժեք համագործակցությունը հաստատելուց հետո:
- Անդամակցության նախապատրաստման գործընթացը տևեց հինգ տարի և ինը ամիս:
- Բանակցությունների վերջին գլուխները փակվեցին 2011 թվականի հունիսի 30-ին:
- Անդամակցման մասին պայմանագրի ստորագրումից և անդամ երկրներում վավերացումից հետո **2013 թվականի հուլիսի 1-ին Խորվաթիան միացավ Եվրամիությանը:**
- **Շենգենյան գոտու կազմում ընդգրկվեց 2023 թվականին:**
- **Եվրագոտուն միացավ 2023 թվականին:**

Տնտեսական աճի տեսանկյունից, Եվրամիությանը միանալուց տասը տարի անց, Խորվաթիայի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելացել է ԵՄ միջին ցուցանիշի 50%-ից մինչև 75%-ը, ինչի արդյունքում լիովին վերականգնվել է 2008 թվականի ֆինանսական ճգնաժամը, կրկնապատկվել է արտահանումը, իսկ գործազրկության մակարդակը 2013 թվականի 17,25%-ից կրճատվել է մինչև 6,1%:

- Խորվաթիայի բնակչությունը կազմում է 3 861 976 մարդ (2024 թվականի տվյալներով):
- 2023 թվականի տվյալներով ԵՄ երկրների հետ Խորվաթիայի արտահանման մասնաբաժինը կազմում է 67,3%, մյուս երկրների հետ՝ 32,7%:

[5] Ի դեպ, Վրաստանի հայտը դրական է գնահատվել Եվրամիությանը դիմելուց հետո 4 ամիս անց:

- Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 15 020 եվրո:
- Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը՝ 28.1%:
- Նվազագույն աշխատավարձը՝ 840 եվրո:

Խորվաթիան եվրոպական միջոցների ամենախոշոր ստացողն է, ինչն ամենևին էլ զարմանալի չէ, եթե հաշվի առնենք, որ այն Եվրամիության ամենաերիտասարդ անդամ երկիրն է:

3 Ինչպիսի՞ն է Եվրամիության բանկային և վարկային քաղաքականությունը

Բանկային միությունը (Banking Union) Եվրամիության տնտեսական և արժութային միության հզորացման կարևոր մեխանիզմն է, որը թույլ է տալիս հետևողականորեն կիրառել ԵՄ բանկային կանոնները ԵՄ անդամ երկրներում:

Ֆինանսական կայունությունը հիմքային է Եվրամիությունում: Այն ենթադրում է ոչ միայն աջակցել և զարգացնել ֆինանսական շուկաներն ու շուկայական ենթակառուցվածքները, այլ նաև հաղթահարել և բալանսավորել ֆինանսական ցնցումները: **Եվրոպական կենտրոնական բանկը (ECB)** Եվրամիության հիմնական ինստիտուտներից է, որի գործառույթների մեջ ներառված են ֆինանսական կայունության ապահովումը, ռիսկերի նույնականացումը և ռիսկերի գնահատումը:

2000-2024 թվականներին Եվրագոտու առևտրային բանկերի կողմից տրված անշարժ գույքի գնման վարկի տոկոսը հետևյալն է. ամենաբարձրը՝ 6,53%, իսկ ամենացածրը՝ 1,40%:

Եվրագոտու մեջ ներկայումս ընդգրկված են ԵՄ 27 երկրներից 20-ը՝ Բելգիան, Գերմանիան, Էստոնիան, Իռլանդիան, Հունաստանը, Իսպանիան, Ֆրանսիան, Խորվաթիան, Իտալիան, Կիպրոսը, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Նիդերլանդները, Ավստրիան, Պորտուգալիան, Սլովենիան, Սլովակիան, Ֆինլանդիան: **Եվրագոտու մեջ ընդգրկված չեն՝** Բուլղարիան, Չեխիան, Դանիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան և Շվեդիան (Եվրագոտուն անդամակցությունը կապված է Եվրամիության դրամավարկային և տնտեսական պարտավորությունների կատարման հետ):

Ստորև ներկայացված է անշարժ գույքի և սպառողական վարկերի տոկոսադրույքը եվրագոտու երկրներում (այդ թվում՝ վերջին ընդլայնման CEE երկրներում):

Անշարժ գույքի վարկի տոկոսը.



Սպառողական վարկի տոկոսը.



Ինչ վերաբերում է վերջին ընդլայնման մյուս CEE (ԿԱԵ) երկրներին, մասնավորապես՝ Բուլղարիային, Չեխիային, Հունգարիային, Լեհաստանին և Ռումինիային, **դրանք գործում են ընդհանուր բանկային գործողությունների և ֆինանսական կայունության քաղաքականության շրջանակներում** և քայլ առ քայլ իրականացնում են ԵՄ դրամավարկային քաղաքականության հետ մերձեցման գործընթացը: Այս երկրներում անշարժ գույքի վարկերի տոկոսադրույքը հետևյալն է.

- Լեհաստան՝ 7.610%
- Ռումինիա՝ 8.180%
- Չեխիա՝ 5.863%
- Հունգարիա՝ 7.500%
- Բուլղարիա՝ 4.555%

4 Ի՞նչ է նշանակում Վրաստանի համար թեկնածուի կարգավիճակը

Եվրոպական զարգացման ուղին Վրաստանի ժողովրդի ընտրությունն է: Անկախության հռչակման օրվանից Վրաստանն անդադար իրականացրել է եվրաինտեգրման քաղաքականություն: Այս ընթացքը որևէ իշխանության կողմից երբևէ չի ենթարկվել փոփոխության/կասեցման/դադարեցման: Վերջին 30 տարիների ընթացքում Վրաստանն իրականացրել է **ինքնազարգացման** և ԵՄ չափորոշիչներին մերձենալու ԵՄ հանձնարարականներ: Այս հանձնարարականների իրագործման և բարեփոխումների համար **Եվրամիությունը միջոցներ է հատկացրել (տարեկան առնվազն 100 միլիոն եվրո) և փոխանցել Վրաստանի իշխանությանը:**

Համավարակի ժամանակ Եվրամիությունը Վրաստանին տրամադրել է մոտ 1,5 միլիարդ լարիի օգնություն: Սա ամենամեծ ծավալի օգնություններից էր ամբողջ աշխարհի մասշտաբով (հաշվի առնելով բնակչության թվաքանակը): Դրանով **Եվրամիությունն արտահայտել է Վրաստանի հանդեպ իր հաստատուն համերաշխությունն** այս աննախադեպ ճգնաժամի պահին (երբ ինքը նույնպես կանգնած էր մեծ մարտահրավերների և ճգնաժամի առաջ):

2022 թվականի մարտի 3-ին Վրաստանի վարչապետը պաշտոնապես, գրավոր և հրապարակայնորեն դիմեց Եվրամիությանը՝ ԵՄ-ին Վրաստանի

անդամակցության խնդրանքով: Եվրամիությունն, ի պատասխան, Վրաստանին շնորհեց թեկնածուի կարգավիճակ: 2023 թվականի դեկտեմբերին Եվրախորհրդի որոշման հիման վրա Վրաստանը մյուս 9 երկրների հետ ընդգրկվեց ընդլայնման գոտում: Ինչպես մյուս երկրների, այնպես էլ Վրաստանի համար մշակվեցին հանձնարարականներ, որոնց իրականացման առաջընթացի գնահատման հիման վրա Վրաստանի հետ կսկսվեին անդամակցության շուրջ բանակցությունները:

Վերևում (տարբեր գլուխներում) ներկայացված փաստերը, վիճակագրությունը, թվերը և դինամիկան վկայում են, որ Եվրամիությունը Վրաստանի համար ևս նախատեսել էր նույն օգուտն ու բարիքները, ինչ մյուս երկրների համար (տնտեսական, սոցիալական, քաղաքական, ենթակառուցվածքային, ներառական, մարդասիրական և այլն):

Ի՞նչ է նշանակում թեկնածություն: Առաջին հերթին սա Եվրամիության կողմից Վրաստանին ցուցաբերվող հզոր (քաղաքական, ֆինանսական, ծրագրային, մարդասիրական) աջակցության ճանաչումն ու օգնությունն է, քանի որ Վրաստանի ժողովուրդը դրսևորել է կամք իր եվրոպական ապագայի և զարգացման համար: Ընդլայնումը բազմաթիվ օգուտներ է բերում նոր անդամ երկրներին, այդ թվում՝

- *քաղաքական կայունություն,*
- *քաղաքացիների՝ ԵՄ ցանկացած երկրում ապրելու, սովորելու կամ աշխատելու ազատություն,*
- *առևտրի աճ ԵՄ ներքին շուկա մուտք գործելու միջոցով,*
- *ֆինանսավորման և ներդրումների ավելացում,*
- *սոցիալական, բնապահպանական և սպառողական չափորոշիչների բարձրացում:*

Ի՞նչ պետք է անի Վրաստանը: Վրաստանի ապագան Եվրամիությունում կապված է մի քանի կարևոր քայլերի՝ հայտնի «9 քայլերի» իրականացման հետ: Դրան գումարվել է «Գործակալների մասին օրենքի» անհամապատասխանությունը Եվրամիության արժեքներին և սկզբունքներին: Վրաստանի կողմից հանձնարարականների իրագործումը վճռորոշ է հաջորդ փուլ անցնելու համար, այն է՝ անդամակցության շուրջ բանակցությունների բացումը: **Բոլոր քայլերն ու փուլերը ոչ թե Եվրամիության, այլ Վրաստանի բնակչության կյանքի որակի բարելավման համար են, իսկ դրանով Վրաստանը կմոտենա Եվրամիության այն չափորոշիչներին, որոնցով մարդիկ իրենց ավելի երջանիկ և բավարարված կզգան:**

Մարդու իրավունքների պաշտպանների միություն –
Մարդու իրավունքների կենտրոն